

616.9 ✓

S-38

3179

ԽՕԼԵՐԱ

ԵՒ

ՆՐԱՍՏԱՅՆ ԱՌՆԵԼԵԱՒ ՄԻՅՈՑՆԵՐ

— (ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ) —

ԼՂԸՆ ԿԵԼ ԶՐԻ

ԵՐԵՎԱՆ

1892

page 24/26 4/1/1911 H. J. Spence

London

My dear Mr. Spence

Yours²
H. J.

Yours

2010

2002

W 54

610
194-85

610.933
5-384
ար.

Խ Օ Լ Ե Ր Ա

Ե Ի



ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Հանրամատչելի գրույց

Աշխատասիւրբ


1003
10401

ԲԺՇԿԱՊԵՏ Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ (ԹԻՔԼԻՆԵՅԻ)
օգնական Երևան-Երասխի նահանգական բժշկի
(Ըստ առաջ ջաղատական հասկի):

— (Երկրորդ տպագրութիւն) —

Շ Ո Ւ Շ Ի

Տպարան և Հիմադրարան Մանգլեկ-Յուրբէնայ
1892



Կ Յ Ե
Երա Կր

Дозволено цензурою. Тифлисъ, 1892 г. 15 Июня.

24118-60

Типо-Литографія А. М. МУГДУСІАКОНОВА.

Ն Ա Խ Ա Ր Ա Ն

Խօլերային համաճարակումները մի քանի անգամ երևացել են Կովկասեան երկրում, և համարեա ամեն անգամ էլ մուտք են գործել Պարսկաստանի սահմաններից: Թէ 1823, թէ 1830 և թէ 1847 թւականների Խօլերային համաճարակումները՝ Պարսկաստանից են անցել մեր կողմերը: 1847 թւականի Խօլերան իր հետևանքներով ամենասաստիկն էր—երկու տարուայ ընթացքում ամբողջ Ռուսաստանը մօտ 1,292,676 մարդ կորցրեց: Ենթուհետև Խօլերան մեր կողմում երևաց երկու անգամ՝ 1865 թ. և 1870 թ., և համեմատաբար այնքան էլ վնաս չտրուեց:

Եյս տարի ևս Խօլերա հիւանդութիւնը հասարակութեան խօսակցութեան նիւթ է դարձել՝ Պարսկաստանում—Մէշէգում Խօլերա լինելու պատճառով: Շատերը մտաբերելով մեր պապերի պատմաները անցեալ Խօլերաների հետևանքների մասին՝ սարսափի մէջ են ընկնում, կարծելով թէ կարող են կրկնվել, ինչպէս առաջ, Խօլերայի կոտորածները: Ճշմարիտ է, թեպէտև անցեալ Խօլերային համա-

ճարակումները մեզ բաւականի մեծ փնտններ են տուել, բայց այժմ բժշկական գիտութիւնը այնքան մանրամասնօրէն և լաւ է ուսումնասիրել խօլերան և գտել դրա դէմ աւելի զօրեղ միջոցներ, որ այնպէս վախենալ խօլերայից, ինչպէս մեր պապերն էին վախենում և սարսափում, էլ պատճառ չկայ: Այժմ արդէն յայտնի է թէ խօլերան ինչ հիւանդութիւն է, որտեղից է գալիս նա, ինչ ճանապարհով է նա տարածվում, և ինչ պէտք է անել, որ մեր կողմերը խօլերա չլինի: Բժշկականութիւնը այնքան հիմնօրէն է ուսումնասիրել խօլերա հիւանդութիւնը, որ առանց չափազանցութեան կարելի է ասել, թէ խօլերա լինելը կամ չլինելը մեղանից, ամբողջ հասարակութիւնից է կախված: Հարկաւոր է միայն որ մեղանից իւրաքանչիւրը լաւ իմանայ, թէ ինչ է խօլերան և ինչպէս պէտք է կռուել նրա դէմ: Այս հէնց այս՝ մեր փոքրիկ աշխատութեան նպատակն է բացատրել.— թէ ինչ է խօլերա հիւանդութիւնը, ինչ ճանապարհներով է նա տարածվում, ինչպէս պահենք խօլերայով հիւանդին, մինչև բժշկի գալը ինչպէս օգնենք հիւանդին, ինչ անենք, որ խօլերայից աղատ պահենք մեր բնակած տեղերը: Այս բոլորը իմանալով և գործադրելով մենք բոլորս՝ համերաշխ գործունէութեամբ կարող ենք աղատել թէ մեզ և թէ մեր երկիրը խօլերայի սարսափելի հետևանքներից:

Ինք է ԽՕԼԵՐԱՆ

Խօլերան՝ ինչպէս և ծաղիկը, կարմրուկը, դիֆտերիտը, քութէշը և մինչև անգամ թոքախտը, վարակիչ հիւանդութիւն է: Մրսելուց ոչ խօլերա կարող ենք ստանալ, ոչ ծաղիկ և ոչ էլ կարմրուկ. այլ խօլերայով հիւանդանալու համար մեր կազմվածքի մէջ պէտք է մտնի խօլերայի թոյնը, կարմրուկով հիւանդանալու համար՝ կարմրուկի թոյնը, ծաղկով հիւանդանալու համար՝ ծաղկի թոյնը, դիֆտերիտով կամ թոքախտով հիւանդանալու համար անշուշտ մեր կազմվածքը պէտք է վարակի դիֆտերիտի կամ թոքախտի թոյնով:

Դեռ սրանից 20—30 տարի առաջ՝ գիտութիւնը այդ հիւանդութիւնների պատճառը այլ կերպ էր բացատրում. երբեմն կլիման էին համարում խօլերայի պատճառ, երբեմն մթնոլորդի ազդեցութեան ետևիցն էին քննում, ոմանք էլ դրա պատճառը համարում էին ժողովրդի աղքատութիւնն ու տնտեսական վատ դրութիւնը, և բոլորովին մոռանում էին, որ

թէեւ այդ բոլոր պայմանները երկար ժամանակ միևնույն էին մնում, բայց վարակիչ հիւանդութիւնները ծագում էին և մի քանի ժամանակից յետոյ առանց տեսանելի պատճառի՝ անհետանում:

Միայն վերջին ժամանակները պարզվեցաւ, որ վարակիչ հիւանդութիւնների պատճառը, հասարակ աչքով անտեսանելի, հայտնի էր, կամ ինչպէս մենք բժշկներս անուանում ենք՝ հիշրօքնէրն էն, որոնք մտնում են մարդու կազմվածքի մէջ, կերակրվում են մարդու կենսական հիւթերից, աճելով աճում են, բազմանում են և մարդուն հիւանդացնում: Իւրաքանչիւր վարակիչ հիւանդութիւն՝ թէ խօլերան, թէ ծաղիկը, թէ կարմրուկը և թէ միւս վարակիչ հիւանդութիւնները ունին իրանց յատուկ հիշրօքնէն կամ հիւանդութիւն առաջ բերող միկրօբը: Շատ տեսակ վարակիչ հիւանդութիւնների միկրօբը՝ գիտութիւնն արդէն գտել է. միւս վարակիչ հիւանդութիւնների միկրօբները թէպէտև գտնված չեն, բայց անկասկած շատ չի քաշել, դրանք էլ կրգտնվին:

Միկրօբները մարդու կազմվածքի մէջ մըտնում են կամ թօքերի միջով շնչառութեան ժամանակ, կամ մարսողական գործարանների

միջով ուտելու կամ խմելու ժամանակ և կամ կաշու միջով, եթէ կաշու վրա վէրքեր կամ չանկռած տեղեր են լինում: Ուրեմն օդի, ջրի, կերակրի, հագուստի, գետնի միջոցով, միկրօբները կարող են մարդու կազմվածքի մէջ մտնել: Իսկ կազմվածքի մէջ միկրօբներն բազմանում են այնպիսի արագութեամբ, որ մի միկրօբից 24 ժամուայ ընթացքում մօտ 16 միլլիօն ու կէս միկրօբ կարող է առաջանալ, հաշվելով որ մի ժամուայ մէջ մի միկրօբը բազմանալով 2 միկրօբ կ'առանայ, երկու ժամում 4, երեք ժամում 8, և այսպէս 24 ժամում $16^{1/2}$ միլլիօն: Ահա այսպէս միկրօբները կազմվածքի մէջ անթիւ-անհամար դառնալով, խմբովին խանգարում են կազմվածքի առողջութիւնը, թունաւորում են կազմվածքն իրանցից արտադրած թոյնով, որին բժիշկներս պոստօմօնէնք ասում, և հիւանդութեան նշաններ առաջացնում, մէկ խօսքով՝ հիշրօքնէնէ:

Խօլերային միկրօբն էլ նմանապէս, եթէ մի որեւիցէ կերպով մարդու կազմվածքի մէջ է մըտնում, բազմանալով բազմանում է, իրանից արտադրած պոստօմօնէն թոյնով թունաւորում և խանգարում է առողջութիւնը, և մի քանի ժամանակից յետոյ հիւանդութեան նշանները երևում են:

ԽՕԼԵՐԱՅԻ ՏԱՐԱԾՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Խօլերայի հայրենիքը Հնդկաստանն է— Գանդես և Բրահմապուտրա գետերի ափերը: Այդ հիւանդութիւնը Հնդկաստանում յայտնի էր Քրիստոսի ծննդից դեռ շատ առաջ: Իր հայրենիքից խօլերան շատ անգամ տարածվեց աշխարհիս ամեն կողմերը և բնակիչներին մեծ վնասներ տուեց: Միւս վարակիչ հիւանդութիւնների նման խօլերան ևս կարող է առաջանալ միայն այն ժամանակ, երբ մարդու մարմնի մէջ որևիցէ կերպով մտնում է խօլերայի միկրօբը, որ ստորակէտի (,) նմանութիւն ունի և այդ պատճառով էլ խօլերային միկրօբին «արտաբանութեամբ» անուան են տուել: Առաջի անգամ խօլերային Տիէրօթը գտաւ Բերլինի պրօֆեսոր Կօխը:

Խօլերայի միկրօբը մարսողական գործարանների մէջ է մտնում ջրի, կերակրեղէնների և կամ մրգեղէնների հետ և աղիքների մէջ բազմանալով՝ խանգարում է մարդու առողջութիւնը: Մարդս հիւանդանալով խօլերայով, փախած է և շատ արագ է առաջ գալիս: Թէ փախածը, թէ կղկղանքը իրանց մէջ պարունակում են անթիւ-անհամար խօլե-

րային միկրօբներ, որոնք եթէ մի որևիցէ կերպով ընկնեն խմելու ջրի և կամ ուտելեղէնների մէջ, կարող են ուրիշներին վարակել: Խօլերայի «արտաբանութեամբ» անուան են համարձակ կարող են մօտենալ խօլերայով հիւանդին. միայն շատ պէտք է զգուշանալ հիւանդի դուրս փսխածից և կղկղանքից. դրանց մէջ են գտնվում վարակիչ ախտածին միկրօբները, և այդ պատճառով ամեն անգամ թէ փսխածը և թէ կղկղանքը առանձին ամանների մէջ պէտք է հաւաքել և նրանց մէջ խառնել այն տեսակ նիւթեր, որոնք միկրօբներին սպանում, ոչնչացնում են: Թէ ինչ նիւթեր են դրանք, այդ մասին յետոյ կ'սօսենք:

Խօլերային միկրօբները կարող են և մարմնից դուրս բազմանալ: Խոնաւ, կեղտոտ գետինը միկրօբի սիրած տեղն է: Բնակարանի ալլեալ կեղտոտ անկիւնները, կեղտոտ շորեղէնները միկրօբների ապաստարանն են, մի խօսքով ամեն մի կեղտոտ տեղում միկրօբները սննդաբար նիւթ են ճանկում և սկսում են արագութեամբ բազմանալ: Մարդիկ անգիտակցաբար կարող են տարածել խօլերային միկրօբները մի տնից միւս տուն, մի թաղից

միւս թաղ և մի քաղաքից միւս քաղաք իրանց շորերով կամ այլ առարկաներով: Մի բժիշկ պատմում է հետևեալը. — 1849 թւին Սնգլիայի Լիդս քաղաքից փոստով ուղարկել էին Իօրկի մօտ գտնված Մուր-Մօրկտօն գիւղաքաղաքը խօլերայից մեռած մի կնոջ ապականուած և չլուացված սպիտակեղէնները. այդ ժամանակ թէ Մուր-Մօրկտօնում և թէ նրա շրջակայքում, մօտ 30 մղոն տարածութեան վրա, խօլերա չկար: Փոստից շորեր ստացող գիւղացին արկղը բանալուց վրա երկրորդ օրը խօլերայով է հիւանդանում և չորրորդ օրը մեռնում. գիւղացու կինը և նրա երկու հիւրերը խօլերայով ծանր հիւանդանում են և այդպէս խօլերայի հիւանդութեան սկիզբն են տալիս և շատերը վարակվում են խօլերայով:

Մարդիկ նմանապէս անգիտակցաբար կարող են տարածել խօլերան հեռու տեղեր իրանց կաշված քաղաքից մի այլ քաղաք է ուղևորվում ըստ երևութին առողջ, բայց իսկապէս խօլերայով վարակված մարդ, դա կարող է պատճառ դառնալ խօլերայի հիւանդութեան տարածմանը և վարակել քաղաքի միւս բնակիչներին: Խօլերայով վարակվածը առժամանակ իրան առողջ

է կարծում, քանի որ դեռ խօլերային նշանները չեն երևացել, իսկ այդ միջոցին մի այլ քաղաք ճանապարհորդելով հիւանդանում է, միւս բնակիչներին վարակում: Մի բժիշկ պատմում է, թէ 1865 թւին խօլերայի ժամանակ Օդեսայում մի, ըստ երևութին, առողջ կին թեթև լուծողութիւն ունեցող իր փոքրիկ երեխայի հետ ուղևորվել էր Օդեսայից Սլտենբուրգ քաղաքը, ուր խօլերայի նշաններ բոլորովին չկային: Կինը երրորդ օրը հիւանդանում է խօլերայով և հինգերորդ օրը մեռնում, մի քանի օրից լետոյ երեխան էլ է վախճանվում խօլերայից, և ահա այդ առաջին դէպքից խօլերան սկսվում է տարածվել Սլտենբուրգում և անցնել նրա շրջակայքը: Սլտենբուրգի օրինակներ շատ կան բժշկական գրականութեան մէջ, որոնք բացատրում են խօլերայի տարածման եղանակները:

Ջրի միջոցով է տարածվում խօլերան: Եթէ խօլերայով հիւանդի արտաթորութիւնները — փսխածն ու կղկղանքը արտաքնոցների մէջ ածվեն, այդտեղերից կարելի են գետնի տակը ծորալով անցնել և թափվել հորերի ջրի և խմելու ջրերի մէջ անգամ: Եւ ահա այդ տեսակ ջրերը խօլերային միկրօբներ պարունակելով, կարող

են խօլերայի տարածմանը պատճառ դառնալ: Նմանապէս եթէ խօլերայով հիւանդի կեղտոտած շորերը լուացվում են կամ հիւանդի կղկղանքն ու փոսածը ուղղակի թափվում են խմելու համար գործածվող առուակների մէջ, — այդ տեսակ ջրերը խօլերա հիւանդութիւնը կարող են տարածել: Նոյնպէս խօլերային միկրօբներ պարունակող ջրով լուացված բանջարեղէնները կամ մրգեղէնները կարող են վարակման միջնորդ լինել: Կօխ և Գրօս գիտնականները ճանճերի թւերի ու փորի վրա խօլերային միկրօբներ գտան: Ճանճերը, ինչպէս յայտնի է, ուրախութեամբ այլևայլ կեղտոտութիւնների վրա են թափվում, ուրեմն և խօլերայով հիւանդի կղկղանքի վրա ևս. այսպիսով ճանճերը խօլերա հիւանդութիւնը կարող են տարածել՝ իրանց թւերի կամ փորի վրա նստած միկրօբներով վարակելով ուտեղէններ, կերակրեղէններ և այլ առարկաներ:

ՈՎՓԵՐ ԵՆ ԱԻԵԼԻ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԽՕԼԵՐԱՅՈՎ
ՀԻԻԱՆԴԱՆՈՒ

Թէ տղամարդիկ, թէ կանայք և թէ մանուկներ հաւասարաչափ կարող են խօլերայով հիւանդանալ: Նստ քիչ է պատահում որ ծըծ-

կեր երեխաները խօլերայով հիւանդանան, մանաւանդ եթէ իրանց մօր կաթով են կերակրվում և ոչ թէ այլ կերակրեղէններով: Երկու տարեկանից մինչև չորս տարեկան երեխաների մէջ խօլերա հիւանդութիւնը շատ է պատահում, և այդ հասակում երեխաները շատ են մեռնում. նմանապէս շատ են մեռնում 20 տարեկանից մինչ 40 տարեկան հասակ ունեցողները: Ծերերն ու պառանքները քիչ են հիւանդանում, բայց եթէ հիւանդանում են, այլևս դժուար են լաւանում: Աւելի շատ են հիւանդանում մշակ դասակարգին պատկանող մարդիկ, նեղ, կեղտոտ, խոնաւ բնակարանների բնակիչները—բանտարկվածները, անկեւանոցների բնակիչները, չքաւոր և աղքատ դասակարգին պատկանող մարդիկ, որոնք կարողութիւն չունին կանոնաւոր ապրելու և հազիւհազ քաշքշում են իրանց ողորմելի գոլութիւնը:

Անկանոն կեանք ունեցողներն աւելի շատով են հիւանդանում քան թէ կանոնաւոր կեանք ունեցողները: Խօլերայի ժամանակ, ինչպէս որ փորձն էլ ցոյց է տալիս, խօլերայով հիւանդանում են աւելի երկուշաբթի և երեքշաբթի օրերը, և ընդհանրապէս տօն

օրերից լետոյ. սլատճառը հասկանալի է, քանի որ տօն և կիւրակի օրերը մարդիկ շատակերութեամբ ու հարբեցողութեամբ պարապելով, անկանոն են անցկացնում իրանց ժամանակը:

Լուծողական դեղերի գործածութիւնը և ընդհանրապէս այն տեսակ կերակուրների գործածութիւնը, որոնք լուծողութիւն կարող են պատճառել, աւելի շուտով են հիւանդացնում խօլերայի ժամանակ. մանաւանդ վատ են ներգործում հոգեկան գրգռումը և խօլերայով հիւանդանալու երկիւղը:

Սուղջ մարդիկ, առողջ ստամոքս ունեցողները աւելի քիչ են հիւանդացնում խօլերայով, որովհետեւ սպամոքսի մէջ «շաշն» (СОЛЯНАЯ КИСЛОТА) ասված մի հիւթ կայ, որ սպանում է խօլերայի միկրօբներին: Եթէ առողջ ստամոքսի մէջ մի որեւիցէ կերպով ջրի կամ կերակրեղէնների հետ խօլերային միկրօբներ են մտնում, ստամոքսային հիւթը նրանց սպանում է: Հիւանդ ստամոքսի աղաթթուն աւելի թույլ է լինում, և եթէ խօլերային միկրօբներն այնքան շատ են լինում, որ ստամոքսային աղաթթուն չէ կարողանում բոլորին սպանել, իհարկէ մարդ այդ ժամանակ աւելի է հիւանդանում խօլերայով: Ուրեմն մարսողական

գործարանների ամենաթեթեւ խանգարումն անգամ, այն ժամանակ, երբ քաղաքում կամ գիւղում խօլերա է տարածուած, խօլերայով հիւանդանալու տրամադրութիւնը սաստկացնում է: Ուրեմն պարզ է, որ անքուն գիշերները, մրսողութիւնը, հոգեկան գրգռումը, որոնք մարսողական գործարանների ոյժը թուլացնում են, խօլերայով հիւանդանալու տրամադրութիւնը պէտք է աւելացնեն: Շատ խմիչքեղէն գործածողները, ստամոքսի հիւանդութիւն ունեցողները, չքաւորները, աղքատները և ընդհանրապէս ամենքը, որոնք թէ այս և թէ այն պատճառով լաւ չեն կերակրվում, աւելի շուտ են զոհ դնում խօլերային:

Խօլերան աւելի ամառն է պատահում, յուլինս, յուլիս և օգոստոս ամիսներն, իսկ ձմեռը՝ յունվար, փետրվար, մարտ ամիսներին խօլերային հիւանդութիւնները քիչ են լինում:

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՆՎԱՐՍԳՐՈՒԹԻՒՆԸ

Երբեմն մարդիկ յանկարծակի են հիւանդանում, գոնէ իրանց ասելով մինչև հիւանդանալն իրանց շատ առողջ են զգացել: Բայց աւելի շատ անգամ է պատահում, որ խօլերային նշանները երևալուց առաջ, մարդս հի-

ւանդանում է հասարակ լուծողութեամբ, թոյլ է զգում իրան, և գլուխը ցաւում է: Սակայն պէտքէ ասել որ խօլերայի ժամանակ հիւանդութեան այդպիսի դէպքեր շատ են պատահում և շուտով էլ անցնում են, և հիւանդները առողջանում են:

Իսկական խօլերան հետեւեալ նշաններով է ճանաչվում. հիւանդները իրանց ստամոքսի մէջ զգում են մի տեսակ կռկռոց, կարծես թէ աղիքներում ջուր է թափվում. այնուհետեւ հիւանդը շուտով էլ անգոյն բրնձի ջրի նման: Կղկղանքի այդպիսի յատկութիւնը հաստատ ապացոյց կարող է լինել, որ հիւանդը խօլերայով է վարակված՝ միայն այն ժամանակ, երբ քաղաքում կամ գիւղում խօլերա կայ, որովհետեւ փորութեան բրնձի-ջրի գոյնով կղկղանքը կարող է և. այլ ժամանակ պատահել և միշտ էլ պատահում է: Վերջին դէպքում շուտով ամենահասարակ միջոցներով և դեղերով մի քանի օրուայ մէջ անցնում է և հիւանդը առողջանում է: Իսկ երբ հաստատապէս յայտնի է որ մի որոշեալ տեղում, քաղաքում կամ գիւղում

խօլերա հիւանդութիւն կայ, ամեն մի հիւանդի բրնձի-ջրի գոյն ունեցող կղկղանքը ուղղակի նշան է թէ հիւանդը խօլերայով է վարակված, ապա ուրեմն այդպիսի հիւանդները աւելի ուշադրութեան են արժանի:

Շարունակենք մեր խօսքը. հիւանդը մի ժամուայ ընթացքում 10—11 անգամ լուծում է, իրաքանչիւր անգամ հիւանդը մի քանի բաժակ ջրալի կղկղանք է արտաթորում, փորի կռկռոցը և աղիքների մէջ իբր ջուր թափվելու զգացողութիւնը շարունակվում է, բայց փորացաւ սովորաբար չէ լինում, մէզի քանակութիւնը քչանում է: Մի քանի ժամից, այն է երկրորդ կամ երրորդ լուծողութիւնից յետոյ, փորը ինչ արիւնախառն շիճուկանման հեղուկի: Փսխողութիւնը շուտ-շուտ է կրկնվում, 10—15 րոպէն մի անգամ: Փսխողութիւնը սովորաբար դիւրին է կատարվում, առանց ոյժ բանեցնելու, սրտի խառնվիլը շատ կարճ է տևում, այնպէս որ հիւանդները փսխում են կտրճես թէ գլուտով, իսկ վերջը փսխողութիւնը շատ գոռալ է լինում, ցաւ է պատճառում և հիւանդը

2418.60

1003
10401

կրճքի գդալի տակ ծանրութիւն և ցաւ է գգում: Լուծողութիւնից և փսխողութիւնից յետոյ սկսվում է մկանունքների $\frac{1}{2}$ - $\frac{1}{3}$ - $\frac{1}{4}$, որ խօլերայի ամենածանր և դժուարատար նշաններից մէկն է: Կծկվում են սովորաբար $\frac{1}{2}$ - $\frac{1}{3}$ - $\frac{1}{4}$ և գարշապարի մկանունքները, աւելի քիչ է պատահում որ մարմնի միւս մկանունքները կծկվեն: Կծկվելու ժամանակ ձկնամսերը պընդանում են, նրանց մէջ սաստիկ ցաւ է ըզգացվում, ոտքերը կորանում են և այսպէս շարունակվում է մի քանի ընդ: Այս ընդհատվում է ու կրկնվում մի քանի ժամ շարունակ:

Բացի լուծողութիւնից, փսխումից և կծկվելուց, խօլերային նշաններից մէկն էլ մարմնի $\frac{1}{2}$ - $\frac{1}{3}$ - $\frac{1}{4}$ է: Խօլերան այն տեսակ արագընթաց և երկիւղալի հիւանդութիւններիցն է, որ նոյն իսկ հիւանդութեան սկզբից հիւանդի տաքութիւնը ոչ թէ աւելանում, այլ ընդհակառակ պակասում է. ամենից առաջ սառչում են ձեռքերն ու գարշապարը, յետոյ երեսը, քիթը, լեզուն, փոքր ինչ յետոյ ամբողջ մարմինը փէտանում է. երեսը, ձեռքերը, գարշապարը կապտում են, երեսի գծագրութիւնը սրվում է, աչքերը փոս են ընկնում և

պղտորվում, սառած ու լղարացած հիւանդի ընդհանուր տեսքը դիակի է նմանում, ձայնը խանձվում, թուլանում է և բոլորովին կորչում, զարկը թուլանում է: Հիւանդը պառկած է լինում անձայն և անշարժ. մկանունքների կծկվելուց և կրճքի գդալի տակի ծանրութիւնից երբեմն հիւանդի գունաթափ լուսահատ երեսը ցաւ է արտայայտում, ծարաւութիւնը սաստիկ նեղացնում է նրան, բայց բոլոր խմածը փսխելով դուրս է թափում:

Չ'նայելով այս բոլորին, հիւանդի գիտակցութիւնը մինչև մահը պահպանվում է, հիւանդը ամեն բան հասկանում է, հարցերին պատասխանում է, թէպէտ շատ դանդաղ, ահամայ և անտարբեր կերպով: Վերջին ընդդիմութիւնը և անտարբեր կերպով: Վերջին ընդդիմութիւնը և անտարբեր կերպով: Վերջին ընդդիմութիւնը և անտարբեր կերպով:

Ծանր խօլերայի նշանները շարունակվում են 8-ից մինչև 24 ժամ և եթէ հիւանդը չէ մեռնում, փսխութիւնը քչանում է և բոլորովին անհետանում. 24 ժամից յետոյ չղկղանքի գոյնը փոխվում է, մաղձը խառնվելուց կանանչ դեղնագոյն գոյն է ստանում, թուլացած զարկն ամրանում է, մկանունքների կծկվելն

ու մարմնի փէտանալն անհետանում են, ոտներն ու ձեռքերը տաքանում են, երբեմն քրտինք է երևում,—և այս բոլոր նշանները ցոյց են տալիս թէ հիւանդութիւնը դէպի լաւն է գնում:

Դժուարատար խօլերայով վարակված հիւանդները հէնց հիւանդութեան սկզբից 12—24 ժամի մէջ մեռնում են: Ամենասաստիկ խօլերայի դէպքերը 3 կամ 4 ժամից յետոյ մահով են վերջանում: Եթէ հիւանդներն առաջին օրը չեն մեռնում, խօլերայի նշանների թուլանալուց յետոյ՝ կարող է պատահել, որ զոհ գնան խօլերայի հետևանքներից առաջացած ուրիշ հիւանդութիւնների:

Հիւանդութեան լաւ ընթացք ստանալու նշաններն սկսվում են երկրորդ կամ երրորդ օրը. զարկը պնդանում արագանում է, երեսը կարմրում, աչքերն արիւնով լցվում. արտասունքը շատանում է, հիւանդները գանգատվում են գլխացաւից, գլուխը ծանրանում է, ականջներում խշխշոց է առաջանում: Դրանք առողջանալու նշաններ են և շարունակվում են 4-ից մինչև 10 օր: Հիւանդութեան երկրորդ կամ երրորդ օրից մէզն աւելանում է, ախորժակը լաւանում, քունը հանգստանում է,

մարսողութիւնը կանոնաւորվում, ոյժերը վերականգնում են: Երբեմն առողջանալու շրջանին հիւանդի մարմինը բծերով է ծածկվում, որ աներկիւղ է. առաջ բծերը երևում են ձեռքերի և ոտքերի վրա, յետոյ իրանի վրա, և այս բոլորը երկու կամ չորս օրից յետոյ անցնում է:

Առողջանալու շրջանի մէջ խօլերայով հիւանդների մի քառորդ մասը ստանում են *խօլէրայի Գիբ* տիպի հիւանդութիւնը, —մարմնի տաքութիւնը բարձրանում է, զարկը արագանում, լեզուն չորանում է և ծածկվում սպիտակ լորձախառն նիւթով, հիւանդը զառանցում է: Այդ դրութիւնը շարունակվում է երեք կամ 7 օր. և եթէ հիւանդը չէ մեռնում, առողջանալու շրջանը շատ է երկարում:

Ընդհանրապէս նայելով հիւանդութեան նշանների ծանրութեանը կամ թուլութեանը, խօլերան կարելի է երեք տեսակի բաժանել. 1) *խօլէրայի լուծողական*. 2) *խօլէրայի Գիբ*, և 3) *հեշտոցի խօլէրայ*: Առաջի տեսակ խօլերան աւելի թեթեւ հիւանդութիւն է, երկրորդը դժուար, իսկ երրորդը սաստիկ դժուար և մեծ մասամբ մահաբեր:

Այս երեք տեսակները միմեանցից զանա-

զանվում են հիւանդութեան նշանների սաստկութեամբ կամ թուլութեամբ: Խօլերինա և հեղձուցիչ խօլերայի տեսակները ճանաչվում են վերը նկարագրված նշաններով, միայն խօլերիայի նշաններն աւելի թեթեւ են, իսկ հեղձուցիչ խօլերիայի նշանները կատաղի:

Խօլերայի համաճարակումի ժամանակ ամեն մի փորլուծողութեան վրա մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել, որովհետեւ հաւանական է որ հասարակ փորլուծութիւնը կարող է սաստկանալ և խօլերայի սկիզբը դառնալով, վերջ ի վերջոյ դժուարատար խօլերայի փոխվել: Ճշմարիտ է ամեն փորլուծողութիւն դեռ ևս խօլերայի նշան չէ, բայց և այնպէս լաւ է զգուշանալ և իսկոյն բժշկի դիմել, քան թէ այսօր-վաղը գցելով վերջը դժուարատար խօլերա ունենալ: Շատերին յայտնի է որ փորլուծողութիւն ամեն ժամանակ էլ կարող է պատահել: Մանաւանդ ամառուայ շոգ ամիսներին, այն է յուլիսին, օգոստոսին և երբեմն սեպտեմբերին, փորլուծութիւնը շատ է տարածված լինում. սակայն այդպիսի փորլուծութեան հիւանդութիւնները երկիւղալի չեն և առաջանում են ամառուայ ամիսներին, երբ մարսողական գործարաններն

աւելի են խանգարվում խակ մրգեղէններ կամ վատ յատկութիւն ունեցող կերակուր գործածելուց, և կամ ամառուայ փոփոխական եղանակներից, երբ ցերեկը սաստիկ շոգ է լինում, իսկ գիշերները ցուրտ: Այդ հիւանդութիւնը, որ իր նշաններով շատ է նմանում խօլերայի նշաններին, ինչպէս օրինակ՝ փորլուծութիւն, փսխումն, մկանունքների կծկումն, բայց և այնպէս աներկիւղալի հիւանդութիւն է: Եւրոպացիք Նորայայտն են տուել, Հիպոկրատի կամ ուրիշ անունով՝ Ասիայի խօլերայից զանազանելու համար: Ստիական խօլերայով վարակված մարդու փրկածի և կղկղանքի մէջ, ինչպէս ասացինք, ստորակէտանման միկրօբներ կան, իսկ Եւրոպական խօլերայով հիւանդների արտաթորութիւնների մէջ այդ միկրօբները չեն գտնվում: Մի խօսքով Եւրոպական խօլերան աւելի թեթեւ հիւանդութիւն է, համարեա բոլոր հիւանդներն էլ առողջանում են, եթէ ժամանակին բժշկական օգնութիւն հասցնվի:

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՎ ԴԵՋԻՆՖԵԿՑԻԱ

Հնդկաստանի խօլերան շատ ծանր տկարութիւն է, թէպէտև անբուժելի չէ, մանաւանդ

Հիւանդութեան սկզբում: Հիւանդների վրա անհրաժեշտ է կանոնաւոր խնամք ունենալ. թէ Հիւանդութեան ընթացքը և թէ առողջանալը մեծ կախում ունի լաւ Հիւանդպահաներից: Առողջապահական պայմանների մէջ գտնված Հիւանդն աւելի քիչ է նեղվում, և ընդհանրապէս առողջութիւնը շուտով է վերականգնում:

Հիւանդի համար պիտի ընտրել բնակարանի ամենամեծ սենեակը: Եթէ առողջ մարդու համար հարկաւոր է առողջապահական պայմաններին համաձայն բնակարան ունենալ, ուրեմն աւելի ևս հարկաւոր է Հիւանդ մարդու համար, քանի որ Հիւանդը կարողութիւն չունի վնասակար ազդեցութիւններին դիմանալ: Անմաքրութիւնը, ծանրացած օդը, խոնաւութիւնը, սենեակի տաքութեան աստիճանի սաստիկ տատանումը, դժուարամարս կերակուրը, Հիւանդի վրա աւելի շուտ են ազդում քան թէ առողջի վրա. ուրեմն հակառողջական պայմանների մէջ գտնվող Հիւանդի դրութիւնն աւելի երկիւղալի է, քան թէ առողջապահական պայմաններով շրջապատված Հիւանդի դրութիւնը:

Եթէ հնար է, չ'պէտք է ընտրել դէպի

Հիւսիս նայող սենեակն, որովհետեւ արեգակի ճառագայթներից զուրկ է: Սենեակը պէտք է լինի բարձր, օդանցք, վառարան և կամ բուխարի պէտք է ունենայ. ձմեռ ժամանակ վառարանը կամ բուխարին պէտք է միշտ վառ պահել օդամաքրութեան համար: Ամառ ժամանակ լաւ եղանակին պատուհանները կարելի է ամբողջ օրը բաց թողնել, և կամ եթէ այդ անյարմար է, կից սենեակի պատուհանները բաց պահել, իսկ ձմեռը սենեակի օդը պէտք է նորոգել օդանցքներով: Անկողնակալը պատուհանից պէտք է հեռու տեղաւորել և աչնպէս, որ Հիւանդին ամեն կողմից կարելի լինի մօտենալ: Հիւանդի երեսը դէպի պատը պիտի լինի դարձրած, որպէսզի պատուհանի լոյսը չնեղացնէ նրան: Աւելի նպատակալարմար է անկողինը փափուկ խոտով լցնել, որ իբրեւ էժանագին նիւթ վերջը կարելի լինի ալրել: Հիւանդի լետքի տակ պէտք է չ'էօն փռել՝ մաքրութիւն պահպանելու համար: Հիւանդպահները պէտք է մեծ ուշադրութիւն դարձնեն Հիւանդի արտաթորութիւնների — փսխածի և կղկղանքի վրա, որոնք պիտի ուղղակի ընդունվեն առանձին ամանների մէջ: Խիստ մաքրութիւն պահպանելու համար աւելի յարմար է

որ կեղտակալ ամանները ասպակուց լինին և ոչ թէ մետաղից:

Որովհետև խօլերայով հիւանդի փսխածն ու կղկղանքը վարակիչ սկզբունքներ—միկրօբներ են պարունակում, այդ պատճառով ամեն անգամ փսխածի և կղկղանքի վրա պէտք է ածել այնպիսի դեղեր, որոնք ախտածին միկրօբներին սպանում, ոչնչացնում են: Այդ գործողութեանը մենք բժիշկներս *Բէշնի Բէշնի* ենք ասում. իսկ միկրօբներ ոչնչացնող դեղերին՝ դէզինֆեկցիական միջոցներ ենք անուանում: (Դէզինֆեկցիա բառը լատինական բառ է և նշանակում է առարկաներին չվարակող յատկութիւն տալ):

Ուրեմն դէզինֆեկցիա անել ասելով մենք պէտք է հասկանանք՝ վարակիչ փսխածի և կղկղանքի մէջ գտնված միկրօբներին ոչնչացնելը: Եւ որովհետև խօլերայի տարածման պատճառը փսխածի ու կղկղանքի մէջ գտնվող միկրօբներն են և ոչ թէ ինքը հիւանդը, որին աներկիւղ կարելի է մօտենալ, այդ պատճառով հիւանդապահների ամենագլխաւոր պարտականութիւնը պէտք է լինի իսկոյն ևեթ կեղտակալ ամանների մէջ ընդունված փսխածն ու կղկղանքը դէզինֆեկցիայի ենթարկել:

Այդ նպատակի համար պէտք է գործ դնել հետևեալ դէզինֆեկցիական խառնուրդները:

Ամենից առաջ կեղտակալ ամանները մինչ կէսը պէտք է *սուլեմայի ջրախառնուրդ* լցնել: Սուլեմայի ջրախառնուրդը պէտք է պատրաստած լինի $\frac{1}{10}$ 0/0 սուլեմայից, այսինքն եթէ սուլեման վերցնենք մի մսխալ, ջուրը պէտք է վերցնել 1000 մսխալ:

Այնուհետև կեղտակալ ամանների մէջ իւրաքանչիւր 3 գրվանքայ արտաթորութիւնների վրա պէտք է ածել *սուլեմայի* (сулема), *կարբօլեան լեւա* (карболовая кислота) և *խլորիստի ցինկ* (хлористый цинк) խառնուրդը հետևեալ չափով.

Սուլեմա 2 գրամ, կամ Դեր իշուր ճապարակէն
 1/2 ֆլուիդ:

Կարբօլեան լեւա 6 գրամ, կամ Դեր իշուր՝
 ճապարակէն 1/2 ֆլու 1/2 ֆլու:

Զոր խլորիստի 20 գրամ, կամ Դեր իշուր ճա-
 փարակէն չորս ֆլու 1/2 ֆլու:

Այս խառնուրդի փոխարէն կարելի է գործ դնել նմանապէս, ամեն մի երեք գրվանքայ արտաթորութիւնները դէզինֆեկցիա անելու համար, և հետևեալ խառնուրդը, որ առաջին խառնուրդի նման է, միայն խլորացինիկ տեղ

ժ ծ Ֆեապղչէն (МѢДНЫЙ КУПОРОСЬ—կապույտ քար) պէտք է լինի.

Սուլէմ 2 Գրամ, համ Ձեր հշուով Տափառարապէս
ինչ հախալ.

Կարթուէան Լեւոսա 6 Գրամ, համ Ձեր հշուով
Տափառարապէս մէկ ու ինչ հախալ.

ԾծՖեապղչէն (հապոյս քար) 34 Գրամ,
համ Ձեր հշուով Տափառարապէս ու ինչ հախալ:

Հիւանդի արտաթորութիւնները—փսխածն ու կղկղանքն այրելով նոյնպէս կարելի է դէզինֆեկցիա տնել: Դրա համար կեղտակալ ամանները պէտք է լցնել փայտի թեփով կամ տաշեղով, վրան բաւականաչափ նաւթ ածել և հիւանդի արտաթորութիւնները ուղղակի ընդունել այդ տեսակ պատրաստած ամանների մէջ և յետոյ դուրսը բաց օդի մէջ ալլել: Պէտք է լաւ ուշադրութիւն դարձնել, որ արտաթորութիւնները չ'թափվեն անկողնի, շորերի կամ կարասիների վրա: Խօլերային արտաթորութիւններով ապականված էփանազին առարկաները կարելի է ուղղակի այրել: Սպիտակեղէնն ու վերմակը պէտք է ընկղմել մի մեծ աման, որի մէջ պէտք է ածած լինի սուլեմայից, կարբօլեան թթուատից ու խլօրացինից պատրաստած խառնուրդ հետեւեալ չափով.

Սուլէմայի ըրախառնուրդ 0,1 %₀, ալլինին մէկ
հախալ սուլէմ, $10^{1/2}$ Գրվանչայ ջուր.

Խլօրացինի ջուր 2,0⁰/₀, ալլինին 20 հախալ խլ-
րացինի և $10^{1/2}$ Գրվանչայ ջուր.

Կարթուէան Լեւոսայի ջուր 0,5⁰/₀, ալլինին 5
հախալ կարթուէան Լեւոսա էւ $10^{1/2}$ Գրվանչայ ջուր:

Այս երեք տեսակ դէզինֆեկցիական ջրախառնուրդները խառնում են միասին հաւասարաչափ և ածում տաշտակը, որի մէջ ընկղմում են սպիտակեղէնը և այլ լուացվելու առարկաները: 4—5 Ժամից յետոյ սպիտակեղէնը կամ միւս առարկաները քամում են և ուղարկում լուացարարին լուալու:

Պէտք է լաւ իմանալ որ այդ դէզինֆեկցիական նիւթերը սաստիկ թուճաւոր յատկութիւն ունին, մանաւանդ սուլեման. ուստի դրանց դործածողները մեծ զգուշութիւն պէտք է բանեցնեն, եթէ ոչ կարող են թուճաւորվել:

Միևնոյն դէզինֆեկցիան ջրախառնուրդով կարելի է լուանալ յատակները, կահ կարասիքը և այլ կեղտոտած առարկաները:

Հիւանդպահները ամեն անգամ հիւանդին մօտենալուց յետոյ պէտք է իրանց ձեռքերը լուանան դէզինֆեկցիական 0,1⁰/₀ սուլեմայի

ջրախառնուրդով, այնուհետև սապնով և հասարակ ջրով լուացվել: Նմանապէս ճաշելուց առաջ պէտք է ձեռքերը դեղինֆեկցիայի ենթարկել: Հիւանդի բնակարանում կերակուր և մինչև անգամ ջուր չպէտք է ընդունել: Հիւանդապահները իր ժամանակին պէտք է ուտեն ու խմեն, քաղցած փորով հիւանդի բնակարանը չ'պէտք է մտնեն:

Հիւանդի առողջանալուց կամ, տարաբաղդաբար, մեռնելուց լետոյ բոլոր բնակարանը և նրա մէջ գտնված բոլոր առարկաները պէտք է դեղինֆեկցիայի ենթարկել: Այդ նպատակի համար աւելի նպատակայարմար է գործ դնել՝ ծծմբաթթուատ գազը (СВРНИСТАЯ КИСЛОТА) հետեւեալ կերպով.—

Բոլոր վարակված նիւթերը և ընդհանրապէս հիւանդի բնակարանի մէջ գտնված բոլոր առարկաները տեղադրում են յատակի կամ սեղանների վրա, իսկ շորեղէններն ու սպիտակեղէնները փռում են սենեակի պատերի մէջ կապած սլաքանների վրա: Բուխարու և վառարանի անցքերը լաւ պնդացնում են, դռներն ու պատուհանները թղթում, թողնելով միայն դուռը մի առժամանակ կիսաբաց, սենեակի մէջտեղը դնում են երկաթեայ մի մեծ

թիթեղ, որի վրա մի մաղալ են դնում և կամ աղիւսներից, վեց վերջով խորութեամբ, մի հնոց են պատրաստում: Հրդեհ չ'լինելու համար ամենայն զգուշութիւն պէտք է գործ դնել.— թղթերը, շորեղէնները և միւս դիւրավառ իրեղէնները, որքան կարելի է մաղալից կամ ժամանակաւոր հնոցից հեռու պէտք է տեղադրել: Այնուհետև ձագարածե փոսի կամ մաղալի մէջ մի որոշեալ քանակութեամբ, նախելով սենեակի մեծութեանը, ծծումբ են ածում (սենեակի իւրաքանչիւր խորանարդ սափէնին $\frac{1}{2}$ գրվանքայ ծծումբ), և ծծումբի վրա էլ սպիրտ են թափում: Սպիրտը վառելուն պէս դուրս են գալիս սենեակից կիսաբաց դռնով. այդ կիսաբաց դռնն էլ շուտով դրսից թղթում են: Ծծումբը սկսում է վառվել և ծծումբաթթուատի գազ է առաջանում, որ և լցվելով սենեակի մէջ, իր դեղինֆեկցիական յատկութեամբ ոչնչացնում է սենեակի մէջ գտնված բոլոր վարակիչ նիւթերը — միկրոբները: 24 ժամից լետոյ բաց են անում դռներն ու պատուհանները և լաւ հողմահարում են սենեակը: Դրանից լետոյ միայն կարելի է մտնել բնակարանը:

Ծծմբաթթուատի գազը անգոյն է և հեղձու-

և կծու հոտ ունի, թոքերի վրա սաստիկ է ազդում և վնասում. այդ պատճառով հիւանդի բնակարանը ծծմբաթուառի գազով դեզինֆեկցիա անելու ժամանակ պետք է թէ բնակարանի կից բնակիչներին և թէ վերին հարկի բնակիչներին հեռացնել իրանց բնակարաններից, մինչև դեզինֆեկցիայի գործողութեան վերջանալը:

ՄԻՆՁՆԻ ԲԺՇԿԻ ԳԱԼԸ ՀԻՒԱՆԴԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ
ՏԱԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Խօլերայի տարածված ժամանակ փորլուծութիւն ունեցող ամեն մի հիւանդին անհրաժեշտ է անկողնում պառկեցնել, թէպէտև, կրկնում ենք, ամեն մի փորլուծութիւն ապացոյց չէ, թէ հիւանդը խօլերայով է վարակված, բայց և այնպէս զգուշութիւն բանացնել և խսկոյն ևեթ միջոցներ գործ դնել աւելի ձեռնառու է, քան թէ անուշադիր մնալը:

Առանց բժշկի խորհրդի դեղերի գործածութիւնն անօգուտ և մինչև անգամ վնասակար է, քանի որ հիւանդութեան նշանները այնքան սաստիկ և բարդ են լինում որ այս կամ այն դեղի նշանակութիւնը և չափը միայն բժիշկը կարող է որոշել: Հիւանդապահները և

ընդհանրապէս հիւանդի ազդականների ամենազլխաւոր պարտքն է հիւանդի արտաթորութիւնների դեզինֆեկցիան ճշտութեամբ կատարել և բնակարանի մէջ անպայման մաքրութիւն պահպանել, որով նրանք ազատված կ'լինին խօլերայով հիւանդանալուց: Իսկ հիւանդի համար անշուշտ հարկաւոր է բժշկի ներկայութիւնը:

Այժմ խօսենք ընտանեկան բժշկութեան մասին, որը կարելի է գործ դնել զգուշութեամբ մինչև բժշկի դալը և կամ բժշկից զուրկ տեղերում:

Ինչպէս ասացինք, հիւանդին պետք է անկողին պառկեցնել և աշխատել քրտնեցնել հիւանդին. այդ նպատակի համար պետք է խմացնել բոմով կամ կօնիակով թէյ կամ անանուխի (мята) չայ, փորի վրա տաք խաշիկներ (припарки) դնել, շիշերով լի տաք ջուր դնել ոտների և մարմնի այլ մասերի մօտ, բրդեայ տաքացրած վերմակներով փաթաթել հիւանդին: Իբրև ըմպելիք հիւանդին կարելի է տալ մութուր ջուր, ջրի մէջ կարելի է խառնել իւրաքանչիւր անգամին աղաթթուառի (золяная жидкост) հինգ կաթիլ: Իբրև կերակուր կարելի է նշանակել խժահիւթ սուպ (օրինակ,

գարուց կամ վարսակից պատրաստած) և կամ աւելի լաւ է կերակուր բոլորովին չ'տալ և նրա տեղ նշանակել լաւ կարմիր գինի:

Խօլերայի միկրօբի գիւտից յետոյ, խօլերայով հիւանդի բժշկութեան հայեացքն այլ ուզողութիւն ստացաւ: Այժմ աշխատում ենք հիւանդութեան սկզբից գործ դնել այնպիսի միջոցներ, որոնք մեռցնում են խօլերային միկրօբներին, նոյն իսկ հիւանդի աղիքների մէջ: Այդպիսի միջոցներից մէկը, յայտնի գիտնականների կարծիքով, H_2SO_4 է, որը սնդկալին քիմիական միութիւն լինելով, աղիքների մէջ սուլեմայի է փոխվում, իսկ սուլեման, ինչպէս էլ որ մի քանի անգամ կրկնել ենք, ստականում է խօլերային միկրօբներին մեռցնող ամենասատիկ միջոցներին: Յայտնի գիտնական Կօխ ասելով, սուլեմայի մի մասը 30,000 ջրի մասի մէջ լուծված արդէն ներգործում և սպանում է խօլերային միկրօբին: Փորձերը հաստատեցին, որ կալօմելի գործածութիւնը նպատակայարմար է և արդիւնաւոր խօլերայի լուծուցիւն և խօլերիէսայի ժամանակ, երբ հիւանդի փսխումը այնքան էլ սաստիկ չէ, այլ չափաւոր է, իսկ հեշտոցիէ խօլերայի ժամանակ, կալօմելի ներգործութիւնը կասկա-

ծելի է, քանի որ յաճախակի կատարվող փրսխումը արգելում է, որ կալօմելն աղիքների մէջ անցնի: Բժիշկների կարծիքով H_2SO_4 սկէտք է տալ հիւանդին մեծ քանակութեամբ, որն երկու-երեք անգամ և իւրաքանչիւր անգամին 8 գրան և կամ երկու ժամը մի անգամ $\frac{4}{5}$ գրան:

Բացի կալօմելից, այժմ յայտնի բժիշկներից մի քանիսը H_2SO_4 և H_2PO_4 է H_2O գեղերն են առաջարկում: Պէտք է տալ այդ երկու գեղերն միասին խառն, իւրաքանչիւրից 5 գրան քանակութեամբ, երեք ժամը մի անգամ: Այդ փեղերի գործածութեան համար աւելի լաւ է բժշկի խորհրդին դիմել:

Խօլերային նշանների սաստկութեան ժամանակ բժիշկներս գործ ենք դնում ջրաբժշկական միջոցը, որ հետևեալ կերպ է կատարվում: Պէտք է վերցնել մի սաւան և թրջել Րէմիւրի 12⁰ աստիճան սառը ջրի մէջ և շփել հիւանդի մարմինն այնքան, մինչև որ կաշին կարմրի, այնուհետև հիւանդին իսկոյն տեղաւորում են առաջուց պատրաստած տաք անկողնի վրա, ոտերի մօտ դնում են տաք ջրով լցված շիշերը ու լաւ ծածկում են տաք վերմակով, մի և նոյն ժամանակ հիւանդին մաքուր

ջուր են խմացնում այնքան, որքան էլ որ ցանկանում է հիւանդը: Եթէ երեք ժամից չետոյ հիւանդը չէ քրտնում, կրկնում են սաւանով շփումը: Իւրաքանչիւր անգամ շփումը պէտք է մօտ հինգ րոպէ շարունակել: Եթէ փորլուծութիւնը և փսխումը հինգ կամ վեց ժամից չետոյ չէ անցնում, էլի կրկնում են շփումը:

Փորլուծութեան դէմ, նոր սկսված միջոցին, կարելի է տալ զգուշութեամբ թրիաքի պարունակող, այսպէս ասած, խօլէրային նիւթէրը, որոնք յայտնի են Տիշլմանի, Ինօշկի, Բաշկի կաթիլներ անուններով: Մենք այստեղ աւելորդ ենք համարում առաջ բերել այդ կաթիլների բաղադրութեան դեղատոմսը, քանի որ ամեն մի դեղատանում կարելի է միշտ պատրաստ գնել թէ Տիլմանի, թէ Ինօշկի և թէ Բաշկի կաթիլները: Լուծողութեան դէմ այդ կաթիլները տալիս են իւրաքանչիւր ժամը մի անգամ 10—20 կաթիլ մի դրդալ ջրի հետ խառն: Մի և նոյն ժամանակ պէտք է լաւ լիշել, որ ընդհանրապէս թրիաքի պարունակող բոլոր կաթիլները մեծ զգուշութեամբ պէտք է տալ հիւանդ երեխաներին և ծերերին, այն էլ աւելի փոքր չափով, կամ աւելի լաւ է բոլորովին չտալ,

մէկ որ փոքր քանակութեամբ թրիաքի կաթիլները կարող են հիւանդին անօգուտ լինել և երկրորդ՝ ընդհանրապէս թրիաքին երկիւղալի է երեխաների գործածութեան համար: Այդպիսի դէպքերում պէտք է ընտրել նիւթէրը և տալ օրէն 4—8 անգամ և իւրաքանչիւր անգամին $1/12$ կամ $1/8$ գրան չափով:

Փորլուծութեան դէմ խօլէրայով հիւանդին պէտք է տալ մաքուր սառուցի փոքրիկ կտորներ կուլ տալու: Փորի վրա պէտք է դնել պարկի մէջ լցրած տաք աւազ, կամ թեփ, կամ աղ և կամ տաք աղիւսներ: Մի և նոյն նպատակի համար պէտք է գործ դնել և «սոսնա» (сопная компресс), հետեւեալ կերպով.—երկու կամ չորս անգամ ծալած (փորի մեծութեամբ) երեսուրեք կամ մի ուրիշ կտաւ թրջում են սառը ջրի մէջ, լաւ քամում են և յետոյ փռում են փորի վրա. կտաւի կամ երեսուրեքի վրա դնում են նիւթէրը այն մեծութեամբ, որ երեսուրեքը ծածկուի, իսկ կլէօնկայի վրա դնում են Ֆլանել և կամ մահուդի կտոր և փորը լաւ կապում են, այնպէս որ Ֆլանելի կամ մահուդի տակով օդ չ'անցնէ: Կօմպրէսը փոխում են երեք կամ չորս ժամը մի անգամ:

Երբ մկանունքների կծկումն է սկսվում, հարկաւոր է ամբողջ մարմինը շփել քրտէ շարժ կամ քրտէ գուլպայով, առաջ պէտք է կամաց շփել մէկ ձեռքը, յետոյ միւսը, յետոյ ոտները և այլն. շփելու համար կարելի է գործածել արաղ, սպիրտ և կամ քափուրի սպիրտ (КАМ-ФОРНЫЙ СПИРТЪ):

Հիւանդի ոյժը պահպանելու համար խմացնում են արաղ, լաւ գինի, կօնեակ, շամպանեա գինի, կարմիր գինուց պատրաստած գլինտովէյն:

Հիւանդի առողջանալու ժամանակ, օգտակար կ'լինի Րէօմիւրի 28° աստիճանի տաքութեան վաննա դնել, օրը 3—4 անգամ՝ 20 կամ 30 րոպէ տեղողութեամբ, կամ որքան հիւանդը կը կամենայ:

Մինչև բոլորովին առողջանալը, հիւանդը պէտք է պահել խիստ (դիէտա) անի, դժուարամարս կերակուրներից զգուշ լինի և միշտ գործ դնէ դիւրամարս ու սննդարար նիւթեր՝ կաթ, ձու, թեթեւ սուփ, խմելու համար ջրախառն գինի, հում ջուր խմելուց պէտք է զգուշանալ և միշտ պէտք է գործածել եփ տուած, բայց սառցրած ջուր:

Հիւանդի առողջանալուց կամ, տարաբաղաբար, մեռնելուց յետոյ ամբողջ բնակարանը

և նրա մէջ գտնված բոլոր առարկաները պէտք է դէզինֆեկցիայի ենթարկել: Բնակարանը դէզինֆեկցիա անելու համար նպատակայարմար է գործ դնել ձմաթաթթուաւ գազը աչնպէս, ինչպէս էլ վերը պատմեցինք:

Եթէ հիւանդը, տարաբաղաբար, մեռնում է, պէտք է դիակը փաթաթել $\frac{1}{10}$ 0/0 սուլեմայի ջրախառնուրդի մէջ թաթախուած սաւաններով և դնել էպիտաթափանցիկ դադաղում: Թաղումը պէտք է կատարել առանց հանդէսի, գերեզմանը որքան կարելի է խոր փորել, պէտք է առանձին գերեզմանատուն ընտրել, և որքան կարելի է քաղաքից կամ գիւղից հեռու:

ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Խօսերայով չհիւանդանալու և անգգուշութեամբ հիւանդութիւնը չտարածելու համար պէտք է կանոնաւոր կեանք վարել:

Կանոնաւոր կեանք վարելու համար հարկաւոր է մաքրութիւն պահպանել, չափաւոր գործ դնել թէ ուտելիքէնները և թէ խմիչքեղէնները, կանոնաւոր կարգադրել թէ աշխատութեան և թէ հանգստութեան ժամանակը: Այդ նպատակի համար պիտի հետևեալ խորհուրդները կատարել.

1) Պէտք է մաքուր պահել բնակարանը և ընդհանրապէս բոլոր տեղերը—տները, սենեակները, բազերը, ախոռները, մառանները, արտաքնոցները, կեղտակալ հորերը, աղբանոցները, պարզ և տաք եղանակներին լուսամուտներն ու դռները բաց պահել օդամաքրութեան համար. իսկ ցուրտ և վատ եղանակներին վառարանները և կամ բուխարիները վառ պահել:

Շատերը օդամաքրութեան համար զանազան տեսակ հոտաւէտ թղթեր կամ փոշի (ПОРОШОК) են վառում: Այդ բոլորը տնօգուտ և մինչև անգամ վնասակար է: Հոտաւէտ նիւթեր վառելով սենեակի օդը ոչ մի կերպ չի մաքրվիլ: Սենեակների մէջ չ'պէտք է պահել կեղտակալ ամաններ, անմաքրութիւններ, կեղտոտած սպիտակեղէններ, և այլն: Նմանապէս մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել խանութների մաքրութեան վրա, մանաւանդ ուտելեղէն վաճառող խանութների վրա, որոնք վաճառում են՝ միս, ձուկ, բանջարեղէն, կօլբաս, հաց և այլն: Պէտք է ուշադրութիւն դարձնել տրակտիրների, հասարակական ճաշարանների վրա:

Ամեն անգամ հասարակութիւնը ինքը պէտք է ուշադրութիւն դարձնէ հակառողջական

պայմանների մէջ գտնվող խանութների վրա և իսկոյն իմաց տալ բժիշկներին կամ քաղաքային և գիւղական վարչութիւններին, ապա թէ ոչ ինչքան էլ՝ շատ լինին նշանակված վերահսկողներն ու բժիշկները, դժուար և մինչև անգամ անհնարին է ամեն բանին բարեխղճութեամբ վերահսկողութիւն անել:

2) Պէտք է թէ հագուստը և թէ սպիտակեղէնները մաքուր պահել և սպիտակեղէնը շուտ-շուտ փոխել:

3) Մարմինը պէտք է մաքուր պահել, բաղնիս գնալը շարունակել, միայն պէտք է ուշադրութիւն դարձնել և բաղնիսների մաքրութեան վրա, մրսելուց զգուշանալ: Ով սովորութիւն ունի ամառը սառը ջրի մէջ լողանալու, կարող է իր սովորութիւնը շարունակել, միայն զգուշութիւններ բանեցնելով: Յուրտ ժամանակ չ'լողանալ, նոյնպէս չ'լողանալ առաւօտեան շատ վաղ կամ երեկոյեան շատ ուշ: Պէտք է ճաշ անելուց լետոյ իսկոյն չ'լողանալ, նմանապէս չ'լողանալ ոչինչ չկերած:

4) Մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել խմելու ջրի վրա: Թէ գետերը, թէ ջրհորները, որտեղից խմելու համար ջուր են բանեցնում, պէտք է մաքուր պահել. դրանց մէջ չ'թափել

այլևայլ կեղտոտութիւններ, մանաւանդ խօլերայով հիւանդի փսխածն ու կղկղանքը: Վատ յատկութիւն ունեցող ջուր չ'իմել, միշտ գործ դնել եփ տուած և յետոյ սառցրած ջուր. շատ էլ հաւատ չընծայել այլևայլ խմիչքներին, ինչպէս օրինակ կվաս, լիմօնադ ևայլն: Մի անգամից շատ ջուր չ'իմել, մանաւանդ յոգնած կամ քրտնած ժամանակ, աւելի լաւ է ծարաւը զովացնել տաք թէյով: Արաղի, լաւ գինու և լաւ գարեջրի չափաւոր գործածութիւնը կարելի է մանաւանդ նրանց համար, որոնք սովորութիւն ունին գործածելու:

5) Մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել ուտելեղէնների մաքրութեան և թարմութեան վրա, նմանապէս նրանց քանակութեան և դիւրամարսութեան վրա: Ամեն մէկը մօտաւորապէս փորձով էլ գիտէ, թէ որ կերակուրը իր համար սննդարար և դիւրամարս է, ուստի կերակուր ընտրելիս իւրաքանչիւր մարդ կարող է առաջնորդվել իր փորձով: Կանաչեղէնների և մրգեղէնների չափաւոր գործածութիւնը առողջ ստամոքս ունեցող մարդու համար կարելի է. միւրգը ճաշից յետոյ ուտել, խակ կամ շատ հասած՝ մանաւանդ փտած պտուղներ չ'պէտք է գործածել: Ոչինչ չ'կերած

չ'դուրս գալ տանից: Երկար ժամանակ առանց ուտելու չ'մնալ: Չաղ, հում կամ սառը կերակուր չուտել, զգուշ լինել սոււնկ, սալատ, խիւար, բոխկ, բանջարեղէններ և պտուղ գործածելուց, մանաւանդ ջուր խմեցնող ուտելեղէններից, ինչպէս օրինակ կօլբաս, խոզի միս, աղի ձուկ, պանիր, սոխ, սխտոր ևայլն: Աներկիւզ կարելի է գործածել եփած իստակ կաթ: Կաթը բանջարեղէնների և մրգեղէնների հետ չ'պէտք է գործածել: Շատերը երկիւղից դիմում են աւելորդ զգուշութիւնների թէ ուտելու և թէ խմելու մէջ. այդպէս անելն էլ վնաս է, քանի որ կեանքի մէջ յանկարծակի փոփոխութիւն մտցնելը օգուտի փոխարէն վնաս կարող է տալ: Թոյլ կազմված, մանաւանդ թոյլ մարսողութիւն ունեցողները պէտք է շատ զգուշ լինին ուտելու և խմելու մէջ:

6) Մրսելուց պէտք է զգուշանալ, չ'պառկել և չ'քնել խոնաւ գետնի վրա, խոնաւ տեղերում չ'գլօսնել, և ընդհանրապէս ուշ երեկոները չ'մանգալ, եղանակի համեմատ հագնուել, մանաւանդ ոտներն ու փորը տաք պահել: Փորձը ցոյց է տալիս, որ Ֆլանէլով կամ մահուդով փորը կապած պահելը շատ օգուտ է:

7) Հեռու մնալ գիշերալիս քէֆերից, — հար-

բեցողութիւնից, խնջոյքներից, ֆիզիքական և մտաւոր աւելորդ աշխատութիւնից, որովհետեւ կազմվածքը թուլանալով, աւելի է տրամադրվում հիւանդանալու:

8) Զ'պէտք է գործածել զանազան կասկածելի, պատշաճ, խօլերային կապ-լիներ և այլ սաստիկ ներգործութիւն ունեցող դեղեր: Մանաւանդ առանց բժշկի խորհրդի չ'պէտք է գործածել զանազան լուծողական կամ փսխողական դեղեր:

9) Տանտէրերը, արհեստանոց պահողները, խանութպանները և առհասարակ ամենքն էլ պէտք է ուշադրութիւն դարձնեն իրանց վերահսկողութեան տակ գտնված անձանց առողջութեան վրա և իւրաքանչիւր դէպքում, մանաւանդ երբ լուծողութեամբ հիւանդացողներ է լինում, իսկոյն պէտք է բժշկին դիմեն:

10) Խօլերա երևալու ժամանակ ոչ ոք չը պէտք է իր բնական քաղաքը կամ գիւղը թողնի և այլ տեղ ուղեւորվի, որովհետեւ թէ երկիւղը, թէ ճանապարհորդութեան նեղութիւնը, ինչպէս օրինակ լաւ կերակրից, բնակարանից, հանգստութիւնից և բժշկական օգնութիւնից զուրկ լինելը աւելի սաստկացնում է խօլերայով հիւանդանալու տրամադրութիւնը:

Բացի դրանից այդպէս վարվողները նպաստում են խօլերայի տարածմանը մի քաղաքից միւս քաղաք, մի գիւղից միւս գիւղ:

11) Որովհետեւ չքաւոր և աղքատ դասակարգը զուրկ է լինում լաւ բնակարանից, կերակրից, հագուստից և ընդհանրապէս հակառողջապահական պայմանների մէջ է լինում, աւելի է տրամադրված խօլերայով հիւանդանալու, հարկաւոր է որ ունեւոր և հարուստ դասակարգը թէ ինքնապաշտպանութեան համար և թէ նոյն իսկ մարդասիրութեան տեսակետից ամեն կերպ օգնութիւն տալ աղքատներին ու չքաւորներին: Այդ նպատակի համար շատ լաւ կ'լինի, եթէ խօլերայի ժամանակ հաստատվին, որպէսզի չքաւոր ու աղքատ դասակարգը կարողանայ ձրիաբար մաքուր և սննդաբար կերակուր ստանալ: Նմանապէս չքաւորներին և աղքատներին պէտք է սպիտակեղէն, հագուստ ու վառելիք բաժանել և բժշկական ձրի օգնութիւն տալ:

12) Հիւանդի հագուստը, սպիտակեղէնները, կահ-կարասիքը, անկողնակալը, տեղաշորը, և այլ առարկաները պէտք է շատ խիստ դեղին-ֆեկցիայի ենթարկվեն և ապա գործ դնվեն: Դեղինֆեկցիայի համար պէտք է վաղօրոք դեղինֆեկցիական նիւթերի պաշար սւնենալ:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Խօլերա հիւանդութիւնը ամբողջ հասարակութեան թշուառութիւնն է, և խօլերայի համաճարակումները սահմանափակել և մինչև անգամ բոլորովին արմատախիլ անել կարող է ոչ թէ մէկը, երկուսը, այլ ամբողջ հասարակութիւնը: Միայն հասարակական ինքնագործունէութիւնը կարող է մեզ ազատել վարակիչ հիւանդութիւնների դառն հետևանքներից. ինչպէս էլ որ ազատել է և ազատում է քաղաքակիրթ ազգերին:

Վեռ հին ժամանակներում խօլերայից ազատվելու համար հարկ էր դրուել կերպուստ սահմանների վրա, աշխատելով խօլերայով վարակված երկիրներից մարդկանց երթևեկութիւնը դադարեցնել: Առաջուայ ժամանակները ճանապարհների հաղորդակցութիւնը և մարդկանց յարաբերութիւնը շատ զարգացած չ'լինելով, չիրաւի, երբեմն յաջողվում էր այս և այն տեղերը միանգամայն առանձնացնելով՝ խօլերային համաճարակումից ազատել: Բայց այժմ, երբ միջազգային յարաբերութիւնները երկաթուղիների, խճուղիների, շտեմաւերի միջոցով վերին աստիճանի զարգացած են, կարանտինները կորցրել են իրանց նշանակութիւնը, իբրև նախապաշտպանողական միջոց: Կարանտինը միայն այն ժամանակ կարող է օգուտ տալ, երբ սահմանազլխում

կարելի լինի մարդկանց և ամեն մի առարկայ գէշինֆեկցիայի ենթարկել, իսկ հիւանդներին կանոնաւոր բժշկութեան: Բայց արդեօք կարելի է մի այդպիսի գործողութիւն ճշտիւ իրագործել:

Վերցնենք նոյն իմի օրինակ Պարսկաստանի մեր սահմանները: Հնամ է արդեօք այդ ահագին տարածութեան վրա մի որևիցէ բաւարար բժշկական տեսչութիւն ունենալ: Ամենալաւ կարանտինում անգամ անկարելի է իւրաքանչիւր խօլերային միկրօբին պահել տակ դնել, քանի որ, ինչպէս յայտնի է, եթէ մի որևիցէ կերպ խօլերային միկրօբը անցնէ սահմանը, յաջող հանգամանքներին նայելով՝ 24 ժամում կարող է միլիոնաւոր սերունդներ տալ: Ուստի պարզ է որ խօլերայից մեր երկիրը ազատելու համար, աւելի նպատակաւարմար է յոյս դնել ոչ թէ կարանտինների վրա, այլ նոյն իսկ մեր քաղաքների ու գիւղերի առողջապահական գրութեան բարւոքման վրա:

Իւրաքանչիւր քաղաք և իւրաքանչիւր գիւղ պէտք է մեծ ուշադրութիւն դարձնէ իրանց բնակութեան տեղերի վրա և անընդունակ դարձնէ խօլերայով հիւանդանալու, այդ բանը կարելի է անել գլխաւորապէս անպայման մաքրութեամբ: Մաքրութիւն փողոցների, հրապարակների, մաքրութիւն բազերի, բնակարանների, սենեակների, մաքրութիւն ֆարերիկաների, մի խօսքով, ասենք հարկաւոր է:

Մաքրութիւնը խօլերայի թշնամին է: Խօլերայի միկրօբը մաքուր տեղեր ընկնելով, «վաճակաւի» ոչնչանում է, որովհետեւ նրա կերակուրը կէշն է:

Սյդ բանը վաղուց են հասկացել քաղաքակիրթ ազգերը, որոնք խօլերայի դէմ մաքրութեամբ են կռւում: Եօթանասուն և ութսուն թուականների խօլերային համաճարակումների ժամանակ Անգլիան ազատ մնաց խօլերայից, իր առողջապահական օրէնքները ճիշտ կատարելով: Սյդ առողջապահական օրէնքների համաձայն՝ Անգլիան ժամանակին մաքրեց իր բոլոր քաղաքները և բնակած տեղերը, ջրանցքներ շինեց բնակիչներին մաքուր և առողջարար ջուր մատակարարելու համար, ապականութիւնները քաղաքից դուրս հանելու համար կանոնաւոր կէշահար խաշակէշը (КАНАЛИЗАЦИЯ), ուշադրութիւն դարձրեց, որ բնակիչները առողջարար կերակրեղէններով մատակարարվին,—և ահա այս բոլորը անելով ազատ մնաց խօլերայից, և ապագայում ևս ազատ կ'մնայ:

Ուրեմն խօլերայից ազատվելու համար՝ մասնաւոր և ընդհանուր նախապաշտպանողական միջոցները մենք պիտի որոնենք առողջապահութեան սկզբունքների մէջ, և այդ սկզբունքները գործադրելով միայն՝ մենք կարող ենք յուսալ, որ ազատ կ'մնանք խօլերայի աւերիչ հետևանքներից:

3179

22

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0074733



А. МУГДУСІАКОВЪ

Покорнѣйше проситъ и. заказчи-
ковъ послати въ высылкой формѣ
для книгъ и бланковъ потребныхъ на
1893 годъ дабы имѣть возможность
своевременно исполнять заказы.



Մանկեր-Յանիւնի պարտեաւ ընդամեւս էն տէն տե-
տէ պարտեւեր հայերէն, աստուերէն եւ լատիներէն շեղաներով,
որոնք կ'արտադրւի էն շէնտարա փերով եւ լատիներով:

Հասցէ. Է. Սիւսա Կիւո-Լիտոգրաֆիա Մուգուսիակոբա.